

Արձակ, Պատմվածք

13+

ՎՐԹԱՆԵՍ ՓՄՓԱԶՅԱՆ

## ԿՏԱԿ

### Ա

Ծերունի «Խաթուն Մարեն» երբ երեկոյան տուն մտավ, իսկոյն անկողին ընկավ և զգաց, որ մեռնելու է:

Ցավ չէր զգում, որովհետև ո՛չ որդի ուներ, ո՛չ թոռներ և ոչ էլ աղջիկներ. ինքն էր միայն մնացել յուր բազմաթիվ ընտանիքից. մի առ մի թաղել էր յուր որդիներին, հետո ամուսնուն, որի վրա քամել էր յուր արտասուքների հետին կաթիլները. այլևս չէր ուզել արևի լույսը տեսնել և կուրացել էր: Սակայն բոլորովին էլ կույր չէր, դեռևս կարողանում էր ճանապարհի վրայի քարերը և առուները տեսնել, ետ կանգնել, երբ երեկոյան գյուղը մտնող նախիրի եզները ցատկոտելով անցնում էին, համբուրել տեր-հոր աջը, երբ նա մոտենում էր, և ավելի ձայներից, քան դեմքերից՝ ճանաչում էր իրեն լավ ճանաչող բոլոր գյուղացիներին:

Բոլորը սիրում էին նրան, որովհետև «Խաթուն Մարեն» շատ բարեսիրտ էր, որովհետև բոլորին նա օգնում էր. սովի ժամանակ թույլ էր տալիս յուր դրացիներին օգտվելու յուր ցորենի ամբարից և վեց կովի արտադրած կաթից. ինքը միայն իրեն բավող կերակրով գոհ էր լինում և հազար օրհնանքներ էր տալիս յուր դրացի հարսներին, որոնք գալիս լվանում էին նրա կեղտոտ շորերը, լողացնում էին նրան, խնամում և դրա փոխարեն «Խաթուն Մարենի» դաշտի ցորենը իրենց ամբարը լցնում և տիրուհուն մի քանի գավաթ կաթ տալուց հետո մնացյալը ժողովում և իրենց մեջ էին բաժանում:

«Խաթուն Մարեն» այդ շատ լավ գիտեր, բայց լռում էր և երբ իրեն ասում էին ուրիշները՝ պատասխանում էր. «մշակըն արժանի է վարձոյ յուրոյ...»: «Խաթուն Մարեն» թեև հազիվ կարդալ և գրել գիտեր, բայց յուր ամուսնու բարձրաձայն աղոթքները բոլորն էլ միտն էր մնացել:

Ծվստանի գյուղացիներից ոչ մեկը չէր մոռացել նրան:

Բարեպաշտ և կրոնասեր էր, ինչպես ամեն հայի կին, հյուրասեր էր բառի բուն նշանակությամբ, սիրում էր ամենքին, ուստի և ամենքը սիրում էին նրան: Բայց կար մեկը, որ չէր համակրում նրան և այդ էլ «Խաթուն Մարենի» եղբայր Մարգարն էր:

Մարգարը մի մեծ ընտանիքի տեր էր, ուներ արդեն երկու հարսներ և շուտով գուցե ունենար երրորդ թոռը: Թե ինչու նա չէր սիրում յուր քրոջը այդ մի պատմություն է և կարճ պատմություն:

Երբ «Խաթուն Մարեն» աղջիկ էր և երբ նրա ծնողները կենդանի էին, Մարգարը յուր քրոջ համար գտել էր մի վանեցի ամուսին, բայց ծնողները կամեցել էին իրենց աղջկան չհեռացնել իրենցից, ուստի և համաձայնվել էին սիրուն Մարիամին Խնձոյենց Հայրոյին տալ, որին և սիրում էր աղջիկը: Հայրոն լավ տիրացու էր և նրա ձայնը գրավել էր Մարիամի սիրտը: Մարգարը հակառակեց, և երբ յուր քրոջը ամուսնացնում էին, թքեց և գոչեց առանց մտածելու.

«Շուն դառնամ, եթե էլ ձեզ հետ խոսեմ...»:

Եվ խոսքը պահեց. թեև շատ անգամ կամենում էր հաշտվել յուր քրոջ հետ, թեև շատ արտասովեց, երբ մի առ մի մեռան յուր քրոջ որդիքը և տիրացու Հայրոն՝ փեսան, բայց, կամապաշտ լինելով, կամապաշտ էլ մնաց և մի խոսք իսկ չխոսեց յուր քրոջ հետ:

Մարգարը շատ հարուստ չէր. նրա ունեցած հողերն էլ վաշխառուները պարտքի փոխարեն ձեռքիցն առան, նրա կովերը փոխանակ շատանալու՝ նախ բերած ձագերը ողջ չմնացին, հետո իրենք էլ սատկեցան և Մարգարը մնաց մի քանի ոչխարների, մի կովի և մի բուռ հողի տեր միայն:

Եվ այս բոլոր դժբախտություններին թեև ուզեց դեմ դնել նրա քույրը, թեև «Խաթուն Մարեն» շատ անգամ նրան ուղարկեց յուր կովերը, ուրիշի բերանով խնդրեց, որ դա առնե յուր անտեր մնացած հողերը, սակայն կամապաշտ Մարգարը «չէ ու չէ» էր ասում և չէր ընդունում: Վերջ ի վերջո «Խաթուն Մարեն» այլևս ոչինչ առաջարկեց նրան և ահա տասը տարի կար, որ եղբայր և քույր այլևս ուրիշների միջոցով անգամ իրարու հետ հարաբերություն չէին ունենում:

Կարծում եք, թե չա՞ր էր Մարգարը,— ոչ, միայն կամապաշտի մեկն էր:

Իսկ «Խաթուն Մարեն» էլ չէր կամենում եղբորը ամաչեցնել, ուստի և նրան օգնելու փոխարեն, մյուս խեղճ գյուղացիներին էր անում օգնություն:

Գյուղացիք սիրեցին նրան, Մարիամը Մարե եղավ (մայր) և կանայք կոչեցին նրան «Խաթուն Մարե» (տիկին մայր):

Առավոտյան արթնանում, աղոթում էր, եկեղեցի գնում, տուն դառնում՝ ճաշում էր, հետո մինչև երեկո մնում էր աղքատ գյուղացու տները, պահում էր տանտիկիների ծծի մանուկները, որպեսզի չխանգարեն իրենց մորը, հետո յուր փորձառությամբ ուսած բժշկությամբ օգնում էր մի քանի հիվանդների և երեկոյան տուն էր գալիս, ուր յուր «Եկեսցեն» և «Հայր մերը» ասելուց հետո՝ քնում էր, մտածելով, որ շուտ յուր ամուսնու մոտ պիտի գնար: Բայց արթնանում էր 70 տարեկան «Խաթուն Մարեն». և միայն մայիսի 5-ին էր, որ երբ տուն դարձավ՝ զգաց, որ մահվան ժամը հասել էր:

Ժպտեց, շնորհակալ եղավ աստծուց և միտքը դրեց առանց ոչ ոքի իմաց տալու՝ մեռնել:

Ուստի և ընկավ անկողնու վրա, ժպտելով մահվան էր սպասում:

## Բ

Բայց հանկարծ հիշեց, որ պետք է վերջին անգամ հաղորդությունն առնել, խոստովանվել յուր չունեցած մեղքերը և բոլորովին մաքուր խղճով գնալ առ աստված:

Կարծում էր, թե մեղք ուներ և արքայություն չէր կարող գնալ:

Նստեց անկողնու մեջ, շոշափելով գտավ ձեռքի փայտը և դրանով բախեց կողքի պատը: Այդպես էր անում նա, երբ կամենում էր յուր դրացու հարսին կանչել:

Փոքր-ինչ հետո խրճիթի դուռը բացվեց:

— Ինձ կանչեցի՞ր, «Խաթուն Մարե»,— հարցրեց դրացու հարսը:

— Ներս արի,— պատասխանեց «Խաթուն Մարեն»:

— Տնաշեն, ինչի՞ ես մութի մեջ նստել, չե՞ս կարող ճրագ վառել:

— Ինձ համար միևնույն է, բայց դու կուզես՝ վառիր:

— Որտե՞ղ է չախմախ քարը:

— Գլխիս վրայի պատուհանումն է:

Հարսը ծանրաքայլ մոտեցավ, վերցրեց պատուհանից փոքրիկ արկղիկը, որի մեջ լցրած էր վառված շորի «մնձուրը» — արեղը և կայծաքարը, չիկացրեց, շորի մնձուրը վառեց և տվեց նրան մի չոր ձողի ծայրին քսած ծծմբին. ծծումբը վառվեց, հետո ձողը և այդ ձողով հարսը վառեց նույն պատուհանի մոտ դրված ճրագակալի վրայի ձեթե ճրագը, հետո, երբ լույսը եղավ, նա մոտեցավ հիվանդին.

— Այդ ի՞նչ է, «Խաթուն Մարեն», պառկե՞լ ես:

— Քնելու եմ,— ժպտեց հիվանդը:

— Քնելո՞ւ ես, ինչո՞ւ ուրեմն ինձ կանչեցիր:

— Որ մարդուդ ասես, գնա տերտերին կանչե:

— Տերտերի՞ն,— գոչեց հարսը զարմացած:

— Այո, զգում եմ, որ մեռնելու եմ, գնա, սիրուն Նազլուս, գնա ասա թող տերտերին կանչեն...

Հարսը տեսավ, որ «Խաթուն Մարեն» ծանրացել էր, հասկացավ, որ կատակի ժամանակ չէր, ուստի և լռությամբ վերմակով ծածկեց հիվանդին և ասաց.

— Կերթամ...

— Աստված քեզ օրհնե,— մրմնջաց հիվանդը:

Եվ այժբերը փակեց, որովհետև ուզում էր աղոթել:

Ճրագի լույսը երբեմն պայծառ և երբեմն աղոտ կերպով օրորվում էր, բայց երդիկիցն էլ լուսինը մի երկար շող էր սփռել դեպի հիվանդի անկողինը, որի տակից լսվում էին աղոթողի մրմունջները:

Շուտով լսվեց դրացի դռան ձայնը, դրացի գյուղացին էր, որ դուրս էր ելնում քահանային փնտրելով:

Տեր-Գալուստը շատ հեռու չէր, յուր դռան մոտ նստած խոսում էր մի քանի դրացիների և գյուղի վարժապետի հետ, երբ գյուղացին նրանց մոտեցավ և հայտնեց, որ «Խաթուն Մարեն» հաղորդություն էր պահանջում:

— «Խաթուն Մարեն՞ն»,— գոչեց քահանան,— մեռնո՞ւմ է:

— Մեռնելու մոտ է,— խոսեց գյուղացին:

Քահանան ծոծրակը քորեց, ոտքի ելավ և ասաց.

— Սպասիր գնամ մասնատուփը և մաշտոցը առնեմ,— և ներս մտավ:

— Խեղճ «Խաթուն Մարեն»,— խոսեց գյուղացիներից մեկը:

— Լավ կնիկ էր,— ավելացրեց երկրորդը:

— Լավ հողեր ունի,— դիտեց երրորդը,— արդյոք որի՞ն պիտ թողնե:

— Ո՞վ գիտե, գուցե եղբորը թողնե:

— Հա՛յ, հո՛յ...— մեջ մտավ մի ուրիշը,— «Խաթուն Մարեն» էդ կամապաշտին ոչինչ էլ չի տա... սաղ կենան տիրացու Հայրոյի եղբայրները...

Այդ միջոցին քահանան դուրս եկավ:

— Եղբայրներ ունի՞ տիրացու Հայրոն,— հարցրեց նա՝ լսած լինելով վերջին խոսքերը:

— Իհարկե,— պատասխանեց վարժապետը,— քաղաքի մեջ «քենքենչիներ»<sup>1</sup> են:

— Վայ,— գոչեց մտախոհ կերպով քահանան դառնալով իրեն հրավիրող գյուղացուն՝ ասաց,— գնանք, որդի...

Ճանապարհին քահանայի և գյուղացու մեջ բացվեց մի տաք խոսակցություն, որի մեջ հայտնվեց, որ «Խաթուն Մարեն» «քսան սոմարի» հողի, վեց կովի, երկու եզների և հինգ ոչխարի տեր էր, որ քաղաքումն էլ ս. Հակովբա թաղում լավ տներ ուներ:

Երբ ներս մտան «Խաթուն Մարեի» խրճիթը, ճրագի պատրույզի ծայրը ներս քաշված լինելով՝ մի նվազ լույսով էր միայն տեսնվում հիվանդի անկողինը և պառավի ալեխառն մազերով գունաթափ դեմքը:

— Է՛, որդի,— դարձավ քահանան իրեն բերող գյուղացուն,— դու կարող ես գնալ, խոստովանեցնելու եմ այս կնոջը:

Եվ երբ մենակ մնաց, մոտեցավ անկողնուն:

Պառավը աչքերը բաց արավ, թուլությամբ համբուրեց քահանայի պարզած ձեռքը և ցած ձայնով ասաց.

— Տեր հայր, խոստովանեցրու ինձ:

— Խելքդ վրա՞ դ է, աղջիկս,— հարցրեց քահանան:

— Բոլորովին...

— Կարդա «մեղան»:

Եվ քահանայի հետ պառավը կրկնում էր այդ բազմաթիվ մեղքերի անուններով լի խոստովանության աղոթքը:

— Տեր հայր,— ասաց պառավը, երբ աղոթքը վերջացել էր,— ես մի մեղավոր կին եմ, թեև չեմ հիշում մեղքերս, բայց գուցե բոլոր բաներն արել եմ, ինձ արձակում տուր... Բայց ոչ, առաջ թող տուր ինձ փոքր-ինչ աղոթել...

Քահանան լռությամբ նրան էր նայում. պահ մի լռելուց հետո ծալեց մաշտոցը, կողքին դրեց և ասաց.

— Խաթուն Մարե:

---

<sup>1</sup> Ջրհոր փորողներ, նաև կոյանոց մաքրողներ:

— Տեր հայր...— պատասխանեց կինը:

— Ես որ քո խոստովանահայրդ եմ, աստված ինձ վրա պարտք է դնում քեզ ասելու իմ խորհուրդները, որպեսզի ավելի հանգստացնեմ քո մահդ և որպեսզի քեզնից հետո եղած վեճերը քո պատճառովդ եղած չլինեն...

Նրա ձայնը դողում էր, իսկ պառավը հարցական կերպով նրան նայեց:

— Գիտե՛ս, աղջիկս,— շարունակեց քահանան,— հիմիկվան աշխարհը շատ փոխվել է, էլ չմնացին առաջվա միամիտ, միմյանց հետ խաղաղությամբ ապրող և միմյանց համար ջանք դնող մարդիկ... Էլ չմնացին աշխարհային ունեցածների վրա ծիծաղող և նրանց «ունայնություն» կոչող ջերմեռանդ մարդիկ... Հիմի երբ մի ոսկոր հանեն, իրարու գլուխ կջարդեն, որ այդ ոսկորին տիրանան... Է՛հ, որդի,— հառաչեց նա,— աշխարհս փչացել է, ո՞վ գիտե ինչե՛ր պիտի լինին մեզանից հետո... Ավելի լավ չէ՞, որ մենք առիթ չլինինք ապագա խռովությունների...

— Ի՞նչ ես ուզում ասել, տեր հա՛յր,— հարցրեց պառավը զարմացած:

— Ա՛խ, որդի,— շարունակեց քահանան, մի տխուր կերպարանք ստանալով,— գիտեմ, կունենաս աշխարհային բաներ, ունես հող, տավար, գուցե ունես փող և զարդեր... Թեև փուչ բաներ են այդ բոլորը համեմատելով մյուս աշխարհի երջանկության հետ, բայց արի և այդ բոլորը հասկացրու մեր այժմյան թերահավատ մարդկանց... Մի կտոր հողի համար միմյանց գլխին հող կցանեն, մի տավարի համար իրարու անասուն կշինեն և մի կտոր ոսկու համար միմյանց կխեղդեն... ավերածություններ շատ կլինեն և ինչո՞ւ այդ բոլորի պատճառը դու լինես... արի ինձ, խոստովանահորդ լսիր, գրե՛լ տուր բոլոր ունեցածդ և կտակիր ում որ կամենաս...

— Ինչե՛ր ես ասում, տեր հա՛յր,— գոչեց հիվանդը,— ի՞նչ կտակ, ի՞նչ բան, չէ որ իմ մեռնելուց հետո ամեն ինչ եղբորս կմնա...

Հազիվ թե արտասանեց այդ խոսքերը, որ հանկարծ երեսը ծածկեց և ընկավ անկողնի վրա:

— Է՛հ, որդի, — ասաց քահանան,— դու մի եղբայր ունես, իսկ ամուսինդ մի քանի հաստ, քո մեռնելուց հետո այդ բոլոր մարդիկ միմյանց միսը կսկսեն ուտել, որ թողած կայքերիդ տերը դառնան... Ինձ լսիր, եթե եղբորդ ես ուզում թողնել՝ արա՛, միայն թղթով արա, թղթով, որը չէ կարող ջնջվել և որի դեմ ոչ ոք կարող է խոսել... Եթե լոկ խոսքով անես, քեզ չեն հավատա, որովհետև եղբորդ հետ հաշտ չես...

— Այո՛, այո, — մոմռաց հիվանդը,— հաշտ չեմ և պիտի մեռնեմ առանց նրա հետ մի խոսք խոսելու... աղաչում եմ, տեր հայր,— հարեց նա նստելով,— թե կարգդ կհարգես, թե որդիներդ կսիրես... գնա, շուտ գնա եղբորս մոտ, կանչիր, բեր նրան ինձ մոտ, ասա քույրդ մեռնում է, ամեն ինչ քեզ կտա, միայն ուզում է, որ վերջին անգամ յուր հետ երկու խոսք խոսես... աստված իմ, աստված իմ... մի՞ թե պիտի մեռնեմ առանց եղբորս ձայնը լսելու, առանց իմ Մարգարիս տեսնելու... տե՛ր հայր,— դարձավ նա նորից քահանային,— աստված սիրես, աղաչում եմ, ոտքդ եմ ընկնում...

— Բավական է, որդի,— ընդհատեց քահանան,— իմ պարտքն է եղբորդ բերել քեզ հետ հաշտեցնել. մի՛ երկմտիլ, այս բոլորիս կերթամ, ուր որ լինի կգտնեմ և կբերեմ, աստված ինձ սրա համար կներե իմ մի քանի մեղքերս և քո շնորհիվ...

— Ղուրբան լինեմ քեզ, տե՛ր հայր,— գոչեց հիվանդը ուրախությամբ,— աստված կարգիդ հաստատ պահե... ունեցածիս կեսը քեզ պիտի թողնեմ, այո՛, թողով, կեսը քեզ և կեսը եղբորս... գնա՛, տեր հայր, գտիր և բեր, ապա թե ոչ կմեռնեմ և իմ ոչ մի մեղքս քաված չի լինի...

Քահանան մտախոհ ոտքի ելավ, գնաց դեպի դուռը, ուր պահ մի կանգ առնելով՝ ծոծրակը քորեց և հանկարծ հիվանդին դառնալով՝ ասաց.

— Որդի, թուղթ է՞լ բերեմ հետս:

— Իհարկե, տեր հայր, բեր, կարգիդ ղուրբան... բեր, ես ամենայն ուրախությամբ ունեցածիս կեսը քեզ կտամ...

Այլևս չկարողացավ շարունակել և գլուխը բարձի վրա ընկավ: Քահանան մի տարօրինակ ժպիտով նրան նայեց և դուրս գնաց:

\*\*\*

Ծվստան գյուղը ունի շուրջ 300 բնակիչ, ուստի և Վանի սրբազան առաջնորդը ավելի լավ էր համարել յուր ձեռնադրած անհամար քահանաներից մեկը ընկեր տալ Ծվստանի հին քահանա տեր-Գալուստին:

Այդպես, ուրեմն, գյուղն ուներ երկու քահանա, որոնցից մեկը թեև հասակավոր՝ բայց նոր ձեռնադրված՝ բնակվում էր գյուղի հեռու ծայրում: Թոփալ վարժապետը 30 տարի շարունակ աստվածաբանական դասեր տալուց հետո, այժմ Պողոս սրբազանից քահանա ձեռնադրվելով՝ տեր Խորեն անունն էր ստացել և վեց ամիս էր, որ տեր-Գալուստին ընկեր էր եկել:

Սկզբում տեր-Գալուստը մտածելով, որ յուր ծուխերի կեսը յուր նոր պաշտոնակցին պիտի թողներ՝ ինք չաչքով էր նայում տեր-Խորենին. բայց տեր-Խորենը շատ բարի էր երևում, նա գոհ եղավ հիսուն ծուխով և տեր-Գալուստի հետ վարվել սկսեց այնպես, ինչպես ծառան տիրոջ հետ:

Ամեն անգամ, երբ մի հեռու տեղ գնալ էր պետք, տեր-Խորենը չէր թողնում, որ յուր պատվարժան հայր Գալուստը «էզիեթ» քաշեր<sup>2</sup> և ինքը վագում էր այնտեղ... Մի խոսքով տեր-Գալուստն այժմ «աղավարի» միայն եկեղեցի էր գնում և յուր ուզած ծուխերի մոտ, առանց մոռանալու, սակայն, ստուգելու, թե տեր-Խորենին ինչ է տվել այս կամ այն անձը և հավասար կիսելու արդյունքը:

Տեր-Խորենը ժպտելով կիսում էր նրա հետ մինչև իսկ յուր հիսուն տան բերած արդյունքը և հավատարիմ հաշիվներ էր ներկայացնում: Դրա համար իսկ տեր-Գալուստը սկսել էր այժմ լիովին վստահանալ նրա վրա և դադարել էր ներկայացրած հաշիվները ստուգելու մտքով հանդիպած գյուղացուն հարցնել, թե մկրտության կամ թաղման համար ի՞նչ տվին տեր-Խորենին:

Փառք ասածու, այդ տարվա պես բախտավոր տարի չէր եղել, տիֆը քաղաքից գյուղերն էր տարածվել և մեր սուրբ հայրերի առնտուրը շատ բանուկ էր առայժմ:

Հենց նույնիսկ այն երեկոյան, երբ տեր-Գալուստը «Խաթուն Մարեի» մոտ կանչվեց, տեր-Խորենն էլ մի ուրիշ տան մեջ մահվան մոտ եղող մի ծերունու հաղորդում էր:

---

<sup>2</sup> Նեղություն քաշել:

Խոստովանեցրեց, հաղորդեց, մաշտոցը փաթաթելով շորի մեջ՝ ծոցը դրեց և երբ կամենում էր դուրս գնալ՝ ականջին դիպավ տան հարսների խոսքերը, որոնք մի անկյունում քաշված ցած ձայնով խոսում էին:

— Ո՞վ ասաց,— հարցնում էր մեկը մյուսին:

— Կարապետը լուր տվեց ինձ,— պատասխանում էր մյուսը:

— Ուրեմն այս գիշեր կմեռնի՞:

— Ասում են, որ վաղվա լույսը չի տեսնի... Տեր-Գալուստը արդեն գնացել է հաղորդելու նրան:

— Խեղճ «Խաթուն Մարե...»:

Տեր-Խորենը սարսռաց, արագությամբ փայտը ձեռք առավ և դուրս գնաց տնից:

— Հը՛մ,— մոմռաց նա,— հիմա՛ր բան է... ամիսներով սպասիր այդ մի պատառին և հանկարծ ուրիշը խլե՛ ձեռքիցդ...

Առանց կանգ առնելու, թռավ գյուղի առվակի վրայից, շտապ քայլերով բարձրացավ մի խրճիթի կտուրի վրա կտուրից կտուր անցնելով, վազելով, քան քայլելով՝ հասավ «Խաթուն Մարեի» խրճիթի կտուրի վրա:

Զգուշությամբ և ոտի ծայրերի վրա մոտեցավ երդիկին, կռացավ և ներս նայեց, ներսում տեր-Գալուստը պառավին ասում էր յուր վերջին խոսքերը, որից հետո մոտենում էր դռան և ծոծրակը քորելով հարցնում.

— Թուղթ էլ բերե՛մ հետս...

— Լա՛վ,— մոմռաց ինքն իրեն տեր-Խորենը,— մինչև քո թուղթ բերելդ, իմ ծոցիս թղթերը կբավականանան:

Ասավ և երբ տեսավ տեր-Գալուստի դուրս գնալը, ցած իջավ կտուրից, մղեց խրճիթի դուռը և ներս մտավ:

Տեր-Խորենը — այդ պետք է ասել — մի միջահասակ, նիհար, սակայն բավական գեղեցիկ դեմքով անձ էր, մորուքը շատ կարճ էր, դեմքը՝ զվարթ և ուներ մի ստորաքարշ ժպիտ դեմքին, որով և մոտեցավ պառավի անկողնին, վերմակը զգուշությամբ շարժեց և մեղմ ձայնով.

— «Խաթուն Մարե»,— ասաց,— հիվա՞նդ ես:

Պառավը աչքերը բաց արեց, նայեց քահանային, զարմացած շարժվեց տեղում և փոքր-ինչ բարձրացավ:

— Տեր հայր, այդ դո՞ւ ես... քեզ ես չկանչեցի:

— Գիտեմ, որդի, գիտեմ,— ժպտեց քահանան,— բայց ինձ ասացին, որ հիվանդ ես և ես պարտք համարեցի գալ քեզ տեսնելու... աստուծոյ առատագույթ շնորհներով քեզ օգնելու... բժշկության ավետարանը կարդալու, որ շուտով մեր տեր-Հիսուս Քրիստոսի և հոգվոյն սրբո շնորհիվ ոտքի ելնես, և գյուղը նորից տեսնե յուր բարի «Խաթուն Մարեն»:

— Շատ շնորհակալ եմ, տեր հայր, ես բժշկվելու չեմ, ես մեռնում եմ և հաղորդության պետք ունեի, նրան էլ արժանացա... արդեն տեր-Գալուստը եկել էր:

— Շատ լավ, դրան բան չեմ ասում, բայց ես չեմ տեսնում, որ դու դեռ մտածելու պետք ունենաս մահվան վրա...

— Ո՛չ, տեր հայր, զգում եմ, որ մեռնելու եմ...

— Կամք տեառն օրհնեալ եղիցի,— ասաց տեր Խորենը աչքերը և ձեռքերը երկինք բարձրացնելով,— տեր, ընդունիր քո բարի, ողորմած և առատագուրժ աղախինը ի թիվս արդարոց... «Խաթուն Մարե»,— հարեց նա պառավին դառնալով,— ինչ որ ես պետք է անեի, արդեն արել է իմ սիրելի եղբայրակիցս... բայց երկու խելքը մեկից ավելի լավ է... գուցե նա մոռացել է մի բան... արդյոք մեռնելուցդ առաջ չե՞ս մտածում հաշտվելու քո խեղճ եղբորդ հետ...

— Այո՛, այո՛,— ասաց պառավը,— հենց դրա համար էլ տեր-Գալուստին ուղարկեցի, որ եղբորս գտնե բերե:

— Շատ լավ է այդ, իհարկե, լավ չէ մեռնել անհաշտ, ամենքին «հալալ» պիտի անել, պիտի մեռնելուց առաջ... ըմ, հը՛մ... արդյոք իմ քույրս մտածե՞լ է յուր ունեցածների մասին...

— Մտածել եմ,— ասաց պառավը,— շուտով էլ կտակս գրել կտամ:

— Իհարկե, բոլորն էլ եղբորդ կթողնես...

— Ո՛չ, խոստացել եմ, կեսը տեր-Գալուստին պիտի թողնեմ...

— Մոլորյալ քույր իմ,— գոչեց տեր-Խորենը և ձեռքերը երկինք բարձրացնելով, հարեց — խեղճ աղջիկս, գիտե՞ս, թե այդ ինչ մեծ մեղսական մտադրություն է... ձգել աստուծո մի պաշտոնյային աշխարհային ունայն ստացվածքների մեջ... ոչ, աստված քեզանից հաշիվ կպահանջե այդ մասին... իմ սիրելի պաշտոնակցիս մեղավոր լինելու պատճառը դու կլինիս... աղջիկս, մենք աշխարհային ունայն ստացվածքների պետք չունենք... մենք կերակրվում ենք աստուծո խոսքով և մյուս լավ աշխարհի ստացվածքը պիտի լինի մեր վարձատրությունը... ամսո՛ւս, ավա՛ղ... այդ մտադրությամբ թե՛ պաշտոնակցիս մեղքերի մեջ ընկնելու պատճառ ես լինում և թե խեղճ եղբորդ...

«Խաթուն Մարե» նախ զարմացած, հետո վախեցած և վերջ ի վերջո հուզված՝ լսեց տեր-Խորենի այդ շեշտերով և ծանրությամբ ու խորհրդավոր ձևերով արտահայտած խոսքերը...

— Ուրեմն, տեր հայր,— գոչեց նա,— բոլորն էլ եղբո՞րս թողնեմ:

— Իհարկե, աղջի՛կս, իհարկե, աշխարհային և աստուծո օրենքները գոչում են բարձրաձայն, որ այդպես պիտի անես... ինչ արժե մի քանի անասուն և մի կտոր հող, բայց դրանով դու սատանաներին ես մատնում աստուծո մի պաշտոնյային և վա՛յ քեզ... աստուծո բարկությունը քո հոգիդ գեհենի մեջ կգլորե և հավիտյան կտանջվես նզովյալ սատանաների ձեռքում...

— Իսկ տեր-Գալու՛ստը,— հարցրեց պառավը շվարած:

— Օ՛, սիրելի եղբայրակից... նա մոլորվել է, շլացել է, նա հետո կիմանա, թե որքան մեծ է քո բարերարությունդ, եթե դու նրան մի խիլ անզամ չթողնես քո աշխարհային ստացվածքից... աստված քեզ դրա համար պիտի վարձատրե, եղբայրդ միշտ հոգուդ համար պիտի աղոթե...

«Խաթուն Մարեն» պահ մի լռությամբ մտածեց, հետո ասաց.

— Շատ լավ, ուրեմն... տեր-Գալուստը թուղթ էլ է բերելու հետը, դու այստեղ մնա և կտակս գրիր...

— Թուղթ և գրիչ ինձ մոտ կա,— ասաց տեր Խորենը, հանեց մի թերթ թուղթ, գոտիից մի կաղամար և շարունակեց.— ասա՛, աղջի՛ կս, ասա ինձ քո կամքը և ես, պաշտոնյա ս. եկեղեցու, հանուն աստուծո, կգրեմ այստեղ բոլորը.

— Իսկ եղբա՞ յրս...

— Գուցե եղբայրդ ուշ գա...

— Ի՞նչ ասեմ, տեր հա՛յր,— ասաց պառավը պառկելով, գրիր, որ ամեն ինչ թողնում եմ եղբորս, թե՛ տավարներս, թե՛ տներս, թե՛ հողերս, թե՛ այստեղ սնդուկիս մեջ ունեցած 50 հատ բաջաղլու և 10 հատ մահմուդիե ոսկիներից, արծաթ քնարս<sup>3</sup>, արծաթ թասը<sup>4</sup>, դելմես<sup>5</sup>, արծաթյա պլազիկներս<sup>6</sup> և բոլորը, ինչ որ կա տանս մեջ:

Տեր-Խորենը գրիչը թաթախեց, մի մեծ է դրեց թղթի ճակատին և արագությամբ սկսեց գրել.

Մի քանի րոպե տևեց գիրը, որից հետո կանգ առավ և հարցրեց.

— Ուրիշ ոչինչ չունի՞ս ասելու:

— Գրիր, որ եղբայրս տա քեզ և տեր-Գալուստին իմ մահմուդիե ոսկիներից մի-մի հատ:

— Գրեցի:

— Գրիր, որ թող ինձ թաղեն Երուսաղեմից բերած պատանի մեջ, որ իմ հոգեբաժինը պատրաստ գտնվում է սնդուկի մեջ և չորս հատ նոր ոսկի է... է... իմ հագուստներս, բոլոր ունեցածս իրեն մնա և թող աղոթե իմ հոգու համար, տարենը մի պատարագ անել տա հոգուս փրկության համա, և գերեզմանս օրհնել տա...

Մինչդեռ տեր Խորենը գրում էր, «Խաթուն Մարեն» հետզհետե սկսում էր թուլանալ, վերջապես մի շարժում գործեց և ասաց թույլ ձայնով.

— Շուտ արա, տեր հայր, բեր, որ ձեռք քաշեմ տակը:

— Գրել գիտե՞ս,— հարցրեց քահանան:

— Իմ անունս կգրեմ դժվարությամբ... ամեն բան արեցի՞ր:

— Գրեցի,— ասաց քահանան և հազիվ թե թուղթը պարզում էր պառավին, որ խրճիթի դռան ձայնը լսեց:

---

<sup>3</sup> Դա մի արծաթյա կամար է, որը դնում են ճակատի վրա ճակատանոցի ձևով:

<sup>4</sup> Արծաթյա թաս, որը դնում են զագաթի վրա, այժմ Վանա գյուղերումն են գործածում միայն:

<sup>5</sup> Երիտասարդներին կարմիր և ծերերին կապույտ մահուդից կարած մի երկայն վերարկու է, կանայք են հագնում:

<sup>6</sup> Ապարանջան:

Տեր-Խորենը գուշակեց, թե ով պիտի լինի եկողը, ուստի և արագությամբ մուտք անկյունը սլացավ և կծկվեց սնդուկի հետևը:

Մտնողը տեր-Գալուստն էր:

«Խաթուն Մարեն» աչքերը փակել էր, ուստի ոչինչ չտեսավ, այլ միայն գոչեց.

— Տեր հայր, շուտ արա, մեռնում եմ:

Տեր-Գալուստը մոտ վազեց, կռացավ նրա վրա և գոչեց.

— Աղջիկս, թուղթ բերի, բայց եղբայրդ...

Պառավը զարմացած աչքերը բացեց:

— Տեր-Գալուստ,— գոչեց նա և ապա չորս կողմը նայելով հարցրեց.— ո՞ր է տեր Խորենը:

— Ի՞նչ տեր-Խորեն, աղջիկս, տեր Խորենը իրենց տանն է:

— Նա այստեղ էր ախր...

— Սխալ ես, աղջիկս, ես եմ այստեղ...

— Նա գրեց կտակս, գրեց, ես ասացի և գրեց...— գոչեց պառավը...

— Երազի մեջ ես եղել, աղջիկս,— դիտեց տեր-Գալուստը, ինչնիցե, ահա թուղթ բերի, գրիչ էլ, ասա գրեմ կտակդ...

— Իսկ եղբա՞յրս,— հանկարծ գոչեց պառավը և մի բուռն ճիգ անելով, նստեց անկողնի մեջ:

— Հըմ... ասաց տխրությամբ տեր-Գալուստը,— եղբայրդ չեկավ:

— Չեկա՞վ... չասացի՞ր, որ մեռնում եմ:

— Ասացի:

— Եվ չեկա՞վ:

— Չեկավ, ասաց՝ նա իմ քույրը չէ, թող մեռնի...

— Աստված իմ, աստված իմ,— մոնչաց պառավը և ընկավ անկողնի մեջ...

— Եղբայրդ վատ մարդ է...— շարունակեց տեր-Գալուստը,— շատ վատ մարդ է, ինչ եղբայր լինի, որ յուր քրոջը վերջին անգամ գոնե տեսնելու չգա... Թշնամին անգամ այդպես չի անի...

— Լռի՛ր, տեր հայր,— գոչեց պառավը խեղդվողի ձայնով,— աստված իմ մեղքերիս համար ինձ խիստ է պատժում... շո՛ւտ, շո՛ւտ, գրի՛ր կտակս...

— Ինչպե՞ս գրեմ,— հարցրեց քահանան:

Պառավը պահ մի մտածեց, հետո հանկարծ փոքր-ինչ բարձրացավ և ասաց.

— Տեր հա՛յր, որովհետև եղբայրս շատ ատում է ինձ, ուստի և ես նրան թե ներում եմ և թե շատ սիրելուս համար նրան եմ թողնում իմ բոլոր ունեցածս...

Տեր-Գալուստը քարացավ:

— Իսկ ի՞նչ...— մրմնջաց նա:

«Խաթուն Մարեն» չէր լսում նրան:

— Գրի՛ր,— շարունակեց նա ընկնելով անկողնի մեջ — գրիր բոլոր ասածներս, բոլորը նրան եմ թողնում...

Եվ լռեց ու աչքերը փակեց:

Տեր-Գալուստը նորից փոքր-ինչ մտածեց, հետո գլխով մի շարժում գործեց, ժպտեց և արագությամբ սկսեց գրել:

Հինգ բուպե միայն փետուրե գրչի շարժումն և ձայնն էր լսվում խրճիթի մեջ, որից հետո տեր-Գալուստը գրիչը տեղը դրեց և ասաց.

— Աղջիկս, լսո՛ւմ ես ինչ:

— Եղբա՛յրս...— մռնչեց պառավը,— եղբորս բերեք... սուտ է, նա կգա... եղբորս բերեք... աստված իմ, աստված իմ... գթա ինչ...

— Աղջիկս,— կրկնեց քահանան,— կտակդ գրեցի, կարո՞ղ ես ստորագրել:

Պառավը դադարեց գոչելուց և շարժվեց, ելավ նստեց, աչքերը չորս կողմը դարձրեց, մի վայրկյան դիտեց քահանային և ասաց.

— Տեր հայր, տուր գրածդ, որ ստորագրեմ:

Եվ համարյա թե խլելով՝ առավ քահանայի ձեռքից գրիչը:

Այդ միջոցին դրսում շների հաչելու և մի որոտումի նմանվող մարդու ձայներ լսվեցան:

Տեր-Գալուստը գունաթափվեց, ճանաչեց իսկույն «Խաթուն Մարենի» եղբոր ձայնը, թուղթը ցած գցեց և դուրս թռավ խրճիթից գոռալով.

— Չեմ թողնի...

Հազիվ թե դուրս էր գնացել, որ պառավը նորից ընկավ անկողնի մեջ, իսկ տեր-Խորենը դուրս թռավ սնդուկի ետևից, ձեռքի բռնած թուղթը գցեց հիվանդի անկողնի վրա, այնտեղ գրվածը ճմրտկեց, գրպանը դրեց և նորից սահելով մտավ սնդուկի ետև...

## Գ

Այդ դեպքերից մի քանի ամիս հետո քաղաքի առաջնորդարանում գումարված սահմանադրական դատական ժողովը սպասում էր Պողոս Էպիսկոպոսի՝ նախագահի մտնելուն, որպեսզի դատերը սկսեն:

Առաջնորդարանի բակում, պատշգամբում, ս. Նշան եկեղեցու գավթի պատերի տակ, ջրհորի շուրջը՝ լցվել նստել էին բազմաթիվ հայ և քուրդ գյուղացիներ, որոնցից յուրաքանչյուրը յուր ցավն

էր պատմում մյուսին, իսկ երբեմն-երբեմն առաջնորդարանի թուրք կսվազը<sup>7</sup> և շատ անգամ սրբագունի Վարդան ծառան դուռը բաց անելով հայիոյանքով՝ հրամայում էին ցած խոսել գյուղացիներին, որոնք իրենց աղմուկով լցրել էին բակը:

Իսկ երբ շուկայի դռան մոտից մտնում էին աղաներ, իսկույն գյուղացիք ոտքի էին ելնում և լռությամբ ճանապարհ էին տալիս նրանց, որոնք մտնում էին առաջնորդարանի խորհրդարանը:

Ներսի կողմում, սրահի «գահվե-օջաղի» կոչվող նախագավթի մեջ, մի քանի կոտրած աթոռների վրա, լուսամուտների մեջ կամ ուղղակի գետնի վրա նստել էին հինգ-վեց քահանաներ, որոնցից շատերն իրենց գյուղացի լինելն իսկույն հայտնում էին, որովհետև հագել էին բազմաթիվ այլազույն կարկատաններով լի վերարկուներ, հնությունից դժգունած կալպախները<sup>8</sup> գլխներին և տրեխներ հագած, իսկ քաղաքի երկու քահանաները նրանց իրենց մեջ առած, խոսեցնում և քրքիջներով ծիծաղում էին նրանց միամտության, լեզվի, պատմած գյուղական կյանքի մեջ եղած ցավերի վրա և այլն:

Վանի առաջնորդարանը բաղկացած է չորս սենյակներից. մեկը խորհրդարանն է. սանդուղի ուղղակի կողքինը գրագրի սենյակն է, իսկ նրա աջ կողմում գտնվում են սրբազանի ննջարանը և աշխատության սենյակը:

Եվ մինչդեռ ժողովի անդամները սրահում նստած իրենց նախագահին էին սպասում. մինչդեռ ժողովուրդը խոնված ակնդետ իրենց հերթին էին նայում, որ տեսնեն սրբազանին, ինքը սրբազանը յուր աշխատության սենյակի մեջ մի թիկնաթոռի վրա բազմած՝ ուշադրությամբ լսում էր սենյակի դռան մոտ չոքած մի գյուղական քահանայի:

Ծվատանի տեր-Գալուստն էր, որ մեղմ ձայնով պատմում էր, իսկ սրբազանը երբեմն հեզնորեն և երբեմն խորհրդավոր կերպով լսում էր:

— Հըմ... — ասաց սրբազանը, երբ տեր-Գալուստը յուր պատմությունը վերջացրեց, — գիտե՞ս, տեր-Գալուստ, որ Պողոս սրբազանը չորս աչք ունի, տասննհինգ էլ ականջ... այդ աչքերը շատ սրատես են, ականջները խիստ սուր են և գլխումը եղած խելքն էլ շատ շուտ ըմբռնող: Հըմ... Խնդիրը այն չէ, որ «Խաթուն Մարեն» յուր ունեցածը բոլորը քեզ է թողել, իսկ ինձ հետաքրքիր է իմանալ, թե կտակը գրելուց հետո ի՞նչ պատահեց խրճիթում... Տես, սուտ մի խոսիլ, ես քեզ արդեն խոսք տվի, որ կօգնեմ քեզ, միայն ամեն ինչ ճիշտը պատմիր...

— Ցավդ առնեմ, սրբազան, — խոսեց տեր-Գալուստը, — ինչպես ասացի, նորեն ասում եմ և աստված էլ գիտե, որ սուտ չեմ ասում... Կտակը երբ գրեցի և ստորագրել տվի, պառավը ցույց տվեց յուր գլխի կողմը դրված չեքմեջեն<sup>9</sup>, խնդրեց, որ կտակը այնտեղ դնեմ, հետո բանալին առավ և յուր ներս մտնող եղբորը տվեց:

— Հենց այդտեղ է բանը, — ժպտեց սրբազանը, — հենց այդտեղ բանը փչանում է, որովհետև եթե ամեն ինչ քեզ էր թողել, ինչո՞ւ բանալին քեզ չթողեց, այլ եղբորը հանձնեց...

— Այստեղ խելքս չէ հասնում, սրբազան, — պատասխանեց քահանան շփոթված և կարմրելով, — որովհետև տվեց թե չէ, համբուրեց լաց լինող եղբոր ճակատը և մեռավ...

<sup>7</sup> Զինվորական պաշտոնեի կողմից առաջնորդարանին կամ եպիսկոպոսին տված ձիավոր-պահապանը:

<sup>8</sup> Թուրքահայոց քահանայական, առհասարակ հայ կրոնավորների գլխարկը:

<sup>9</sup> Արկղիկ:

— Սկի խոսք չասա՞ց եղբորը:

— Խո՞ւք... ասաց... ասաց..., որ կամենում էր եղբոր ձայնը լսել:

— Հետո՞:

— Եղբայրը լաց լինելով «սիրելի քույրս» գոչեց, «Խաթուն Մարեն» փաթաթվեց նրան և մի րոպեից հետո արդեն անշունչ դիակ էր այլևս:

— Իսկ քեզ ոչինչ չասա՞ց...

— Ոչ, սրբազան,— խոսեց քահանան ավելի ևս կարմրելով,— ես կամեցա օրհնել նրան, բայց նա երևի մոռացել էր իմ ով լինելս — ձեռքով հրեց պարզած ձեռքս և ասաց. «հեռու, խաբեբա՛...»:

— Հըմ,— ծիծաղեց սրբազանը,— լավ անուն է տվել քեզ... ապա հիմա ինձ ասա, թե ինչո՞ւ քեզ այդպես պատվեց հանգուցյալը...

— Ի՞նչ մեղքս պահեմ, սրբազան,— ժպտեց քահանան,— ինձ ուղարկեց եղբորը կանչելու, ես էլ վազեցի, բայց եղբայրը տանը չէր...

Սրբազանը մի մեծ քրքիջ արձակեց, հետո ոտքի ելնելով լրջացավ և պահ մի ևս չոքած քահանային հեգնական դեմքով նայելուց հետո, ծանրաքայլ մոտեցավ նրան, փոքր ինչ էլ ժպտելով նրան դիտեց և ասաց.

— Տեր-Գալուստ, կուզե՞ս, որ ես ճշտորեն պատմեմ, թե ինչպես է եղել:

— Հավատացիր, սրբազան... Էն ս. Նշանը վկա...— կմկմաց քահանան:

— Լռիր, Պողոս Եպիսկոպոսը հիմար չէ... դու շատ լավ էլ գիտես, որ նրանից ծածուկ պահել մի բան անկարելի է... Այ, պատմեմ քեզ... Պատավը յուր եղբորը կանչել է տվել, որ ամեն բան նրան թողնե և վերջին անգամ ևս նրա հետ խոսե... բայց դու դուրս ես գնացել և ետ դառնալով՝ ասել էս, որ եղբայրդ չէ գալիս... այո, դու ինքդ դիտմամբ չես գնացել եղբորը բերելու... սակայն պատավը պատվիրել է, որ գրես կտակի մեջ, որ յուր բոլոր ունեցածը եղբորն է թողնում, իսկ դու, աստծու ընտիր պաշտոնյան, ամեն բան քեզ վրա ես գրել, օգուտ քաղելով պատավի կարողալ չգիտենալուց և դրությունից... իսկ երբ եղբայրն եկել է, պատավը լավ հասկանալով, թե ինչպես դու յուր եղբորը կանչելու չես գնացել՝ քեզ «խաբեբա» է կոչել և կարծելով թե յուր ամեն ունեցածը եղբորն է թողել՝ բանալին էլ նրան է հանձնել... այս է բոլորը... Հիմա իմացա՞ր, որ Պողոս Եպիսկոպոսից ծածկել անկարելի է...

— Սրբազան...— կմկմաց քահանան:

Եպիսկոպոսը մի քանի շրջան գործեց սենյակում, հետո կանգ առավ, նորից նստեց բազկաթոռի մեջ և հարցրեց.

— Ի՞նչ ունի «Խաթուն Մարեն»:

— Ծառա եմ, սրբազան,— պատասխանեց քահանան,— մի քանի սոմարի հող, 6—7 հատ տավար, մի տուն ս. Հակովբա թաղի մեջ...

— Հըմ... վնաս չունի, մի գյուղացու համար այդ լավ հարստություն է...

Եվ նորից սկսեց ճեմել սենյակում. քահանան գլուխը կախած՝ գաղտագողի դիտում էր սրբազանի դեմքի փոփոխությունները...

— Ինչնիցե,— խոսեց վերջապես սրբազանը,— դատական խորհուրդը ինձ է սպասում. դու երևան չգաս, մինչև որ արկղը բացվի և կտակը կարդացվի... այն ժամանակ քեզ կկանչեն... բայց, այ, ինչպես որ խոսեցինք... կեսը և ձեր գյուղի Սրմալու խաթունը մի շաբաթ ի Լիմ անապատ... հասկացա՞ր...

— Ծառա եմ, սրբազան,— թոթովեց քահանան,— ձեր հրամաններին ո՞վ կարող է չհնազանդվել...

— Դե, այժմ գնա,— խոսեց սրբազանը:

Տեր-Գալուստը ոտքի ելավ, ետ-ետ քաշվելով մի քանի անգամ ձեռքը կրծքին դրած մինչև կես մեջքը ծռելով խորին խոնարհություններ արեց, դուրս գնաց, պահ մի դրսում դրած չարոլիները հագնելով զբաղվեց և խառնվեց նախագավթում սպասող գյուղական քահանաների մեջ:

Փոքր-ինչ հետո սրբազանը եկավ, խոնարհած ամբոխի միջից անցավ և մտավ ժողովի սրահը:

Այնտեղ ևս միայն խոնարհած գլուխներ տեսավ, նստեց սեդիքի<sup>10</sup> վերին գլուխը, ձեռքն առավ քեհրիբարե մեղեսիկը, մի քանի կատակներ արեց յուր կողքին և փոքր-ինչ պատկառանք նստող ծերունի աղաների հետ և հրամայեց ժողովը սկսել:

Գրագիրն արդեն բռնել էր յուր տեղը աստենապետի մոտ:

Մի քանի թեթև գործեր տեսնելուց հետո, աստենապետը հայտնեց, որ Ծվստան գյուղի «Խաթուն Մարեի» գործը քննելու պիտի սկսվի:

Այդ գործը այսպես էր.

Տիրացու Հայրոյի եղբայրները, իրենց հարսի մեռնելը լսելով՝ թափվել էին գյուղը և յուրաքանչյուրը նրանցից աշխատում էր պառավի ունեցվածքներից մի-մի բան կամ ամբողջը խլել. «Խաթուն Մարեի» եղբայրը, որն արդեն բռնել նստել էր ամեն ինչ, սկսեց հակառակել նրանց. և մի ժամի չափ «տուրուղմփոցը» ամբողջ գյուղը բռնեց. վերջապես քաղաքացիք լավ ծեծ ուտելուց հետո ետ քաշվեցան և խնդիր տվին դատական խորհրդին, որ այն ժամանակ դեռևս գոյություն ուներ:

Առաջին հարցաքննության մեջ «Խաթուն Մարեի» եղբայրը հայտնել էր, որ նա յուր քրոջից մի արկղի բանալի էր ստացել, ուստի և առաջնորդարանն իսկույն արկղը բերել տվեց, կնքեց և բանալին էլ պահեց մինչև դատի լրանալը, իսկ տավարները և հողը «եղով» տվեց մյուս գյուղացիներին:

Այդ օրը վերջնական վճիռը պիտի տրվեր, և խորհրդի ներկայությամբ պիտի բացվեր արկղը, որի մեջ — ինչպես պնդում էր մեռյալի եղբայրը — կար մի կտակ:

Այդպես ուրեմն, սրբազանի հրամանով արկղիկը բացվեց և սրբազանը ինքն յուր ձեռքով, մի քանի աղաների ներկայությամբ, բաց արեց:

Արկղի մեջ կային երեք շարան ոսկիներ, արծաթյա ապարանջաններ, մատանիներ, քնար և մերջեն գլխով քորոցներ, որոնց մի առ մի սրբազանը ժողովին ցույց տալուց հետո հանեց այնտեղից չորս ծավաձ թուղթ, բաց արեց և դառնալով ժողովին՝ ասաց.

---

<sup>10</sup> Օթոց:

— Հանգուցյալի եղբայրը իրավունք ուներ, այստեղ կա մի կտակ... Կուզե՞ ժողովը, որ այս կտակը կարդացվի:

Բոլորը հավանություն տվին, և սրբազանը ժպտելու, որովհետև բովանդակությունը նրան արդեն հայտնի էր, կարդաց.

«Հանուն աստուծո, ես Մարիամ, կին տիրացու Հայրոյի, որդի Սահակի, կոչեցյալն Ծոտոտենց, խելքս բոլորովին գլխիս կրնեմ սույն կտակս: Իմ բոլոր ունեցածներս, այսինքն Ծվստան գյուղին մեջ ունեցածս քսան սոմարի հողը, ախոռիս մեջ գտնված երկու եզները, վեց կովը, հինգ ոչխարը, սնդուկիս միջի հագուստները, 50 հատ բաջաղլու ոսկիներս, 10 հատ մահմուդե, արծաթե քնար, թաս, պլագիկներս, մի խոսքով ինչ որ ինձ կպատկանի, բոլորը թողնում եմ իմ խոստովանահայր տեր... տեր-Գալուստին...

— Տեր-Գալուստ չէ, սրբազան,— դիտեց աղաներից մեկը, որ հետևում էր սրբազանի կարդալուն՝ թղթի վրա նայելով...

— Ապա ի՞նչ է...

— Տեր-Խորեն...

Բոլորը զարմացած միմյանց երեսին նայեցին. սրբազանի ձեռքերը դողացին, թուղթը աչքին մոտեցրեց և նորեն կարդաց, բայց նորից տեսավ այնտեղ տեր-Խորեն անունը՝ խուշոր տառերով գրված...

Շփոթվել էր և հրաշքի պես բան էր երևում իրեն այդ...

Պահ մի կարդաց լռությամբ այդ, հետո մի ճիշտ արձակեց և ոտքի ելավ...

— Էֆենդիներ և աղաներ,— ասաց նա հուզմամբ,— ժողովը շարունակենք և ձեր վճիռը սվեք, ահա այս կտակը... արեք, ինչպես որ օրենքն է և ինչպես գրված է այս կտակի մեջ... Ես փոքր-ինչ անհանգիստ եմ...

Եվ առանց այլևս մի բառ ավելացնելու, դուրս գնաց սրահից, դռան առջև կանգնած յուր ծառային դարձավ, հրամայեց նրան իրեն հետևել և երբ մտնում էր սենյակը՝ գոչեց.

— Վարդան, շուտով այդ Ծվստանի ախմախ տեր-Գալուստին այստեղ բեր, շո՛ւտ...

Պահ մի հետո տեր-Գալուստը ներս էր մտնում:

Սրբազանը, որ ճեմում էր սենյակում, երբ տեսավ տեր-Գալուստին, դեմքը խոժոռելով մոտեցավ նրան և գոչեց.

— Ախմա՛խ, է՛ջ, տխմա՛ր... Կորիք, էլ աչքիս չերևաս... Դու ի՞նչ մարդ ես, որ կարողանաս գործ տեսնել, հայդե՛, իթիլ<sup>11</sup>, թերես<sup>12</sup>...

Տեր-Գալուստը քարացած էր այդ հայիոյանքների կույտի տակ:

— Սրբազան...— թոթովեց նա:

---

<sup>11</sup> Կորիք:

<sup>12</sup> Վատ, անպիտան:

— Կորիւր... էշաք հերիֆ<sup>13</sup>... Այնչափ ախմախ ես, կտակի մեջ փոխանակ քո անունդ գրելու, տեր-Խորենի անունն ես գրել:

Տեր-Գալուստը նախ զարմացած մնաց, հետո դողաց պատին կոթնեց ցած չընկնելու համար:

Սրբազանը մի քանի պտույտ էլ գործեց սենյակի մեջ, հետո բեղերն ոլորելով մոտեցավ կիսամեռ քահանային հարցրեց խստությամբ.

— Ճիշտ խոսիր, ո՞վ գրեց կտակը, դո՞ւ, թե տեր-Խորենը:

— Ես, սրբազան, ես...— թոթովեց քահանան:

— Լռիր, ես այնչափ էջ չեմ, որ չճանաչեմ տեր-Խորենի գիրը...

— Սրբազան՝ն...

— Գնա՛, կորի՛ր աչքիցս, հիմա՛ր... Վարդան՝ն,— դարձավ նա սպասող ծառային, որից սրբազանը գաղտնիքներ չէր պահում,— շուտ մարդ ուղարկիր և տեր-Խորենին որտեղ որ է գտնեն և բերեն... Իսկ դո՛ւ, կորսվի՛ր,— դարձավ նա տեր-Գալուստին...

Վարդանը հրելով դուրս հանեց սենյակից տեր-Գալուստին:

Իսկ սրբազանը գնաց նստելու յուր բազկաթոռի վրա, բեղերը ոլորեց և մոմոաց.

— Հոգ չէ, թող տեր-Խորենը լինի, ես իմ բաժինս կունենամ նորեն... Մատանա մարդ է այդ տեր-Խորենը... Հըմ, հետաքրքիր է իմանալ, թե ինչպես է եղել այս գործը...

Տեր-Խորենը շատ լավ գիտեր յուր գործը և ինչպես տեսաք, շատ հեշտությամբ խաբեց տեր-Գալուստին: Օգուտ քաղեց նրա խրճիթից դուրս գնալուց և յուր գրած կտակը դուրսը լքեց փոխեց նրա գրածի հետ:

Իսկ տեր-Գալուստը կարծելով թե «Խաթուն Մարեն» կմեռներ՝ առանց նայելու, թե գրվածքը իրենն էր թե ոչ՝ ստորագրել էր տվել տեր-Խորենի գրած թուղթը և փակել արկղիկի մեջ:

Ասում են, թե սրբազանն իսկ յուր բոլոր խորամանկությամբ հանդերձ, անդադար գովում էր այնուիհետև տեր-Խորենի ճարտարությունը և դրա համար իսկ նրան գյուղիցը փոխադրել տվեց քաղաքի ս. Հակովբ եկեղեցում, ուր և մինչև այժմ կարելի է տեսնել, թեև այժմ բոլորովին կարճահասակ դարձած, բայց նույն կեղծ դեմքով, և ստորաքարշ ծիծաղով տեր-Խորենին, որն ամառ թե ձմեռ, միշտ մուշտակը հագին աղոթում է գլխի ցավ ունեցողների վրա, կտրում է տենդը և նկատվել է իբրև մի բարեպաշտ, բարի և ընտիր քահանա:

Հարուստ էլ է, ունի երկու մեծ տներ, Օվստանում հողեր և «եղով» տված տավարներ, ունի նաև սրբազանի սերը և բարեկամությունը...

Մարգարի — «Խաթուն Մարեն» եղբոր մասին պատմում են, որ երկար ժամանակ դատ վարեց առաջնորդարանի դեմ և յուր այդ համարձակության համար էլ կորցրեց յուր ամբողջ ունեցածը, պարտքի տակ ընկավ, ստիպվեց պանդխտության գնալ և Կ. Պոլիս գնաց՝ յուր կնոջը և որդոց թողնելով յուր հայրենակիցների գթության:

---

<sup>13</sup> Էջ մարդ:

Երեք տարի սրանից առաջ, երբ Կ. Պոլսի ազգային հիվանդանոցի գերեզմանատան մեջ «Պալլիսի  
այագմայի» ժողովրդական հանդեսը տեսնելու էի գնացել, մի թրթուրակեր ծառի տակ ինձ ցույց  
տվին Մարգարի անշուք գերեզմանը:

Մշակություն էր արել, հետո հիվանդացել, հիվանդանոցում մի քանի ամիս պատկել էր և ոչ ոք  
ունենալով յուր վրա լացող՝ մեռել էր...

Իսկապես չգիտեմ, թե ինչ եղան նրա կինը, որդիները և աղջիկները. ի՞նչ պիտի լինեն — մի՞թե  
դժվար է գուշակել...

---